Բջնիի բերդ

Բջնի գյուղն առաջին անգամ հիշատակվում է Vդ., Ղազար Փարպեցու «Պատմություն Հայոց»-ում: XI դարից Բջնին հիշվում է որպես բերդաքաղաք: Այս շրջանում Բջնին Վասակ-Հոլում Պահլավունու նստավայրն էր: Վերջինս վերաշինեց ամրոցը և 1020-ական թթ. ետ մղեց Բջնիի վրա հարձակում գործած քոչվոր ցեղերին: Բջնին դարձավ Հայաստանի չորս եպիսկոպոսական աթոռանիստներից մեկը, որին վերապահված էր կաթողիկոսի ընտրությունը:

1072թ.-ից Բջնին ընկավ թուրք-սելջուկների գերիշխանության տակ, ենթարկվեց ավերների ու կողոպուտի: 1201թ.-ին հայոց զորքերը գրավեցին Բջնին, և այն դրվեց Զաքարյանների իրավասության ներքո, ապա դարձավ Աթաբեկ Զաքարյան Ավագի աթոռանիստը: 1386թ.-ին Բջնին ենթարկվեց Լենկթեմուրի հրոսակների ասպատակությանը: XIII-XIVդդ. Բջնիում էր նստում Այրարատյան նահանգի արքեպիսկոպոսը, որը Արևելյան Հայաստանի չորս գերագահ եպիսկոպոսներից մեկն էր, և որի ձայնը վճռական նշանակություն ուներ կաթողիկոսական ընտրությունների ժամանակ:

Բջնին հայ գրչության օջախներից էր։ 1478թ.-ին գրված մի Ավետարանի հիշատակարանում Բջնին հիշատակվում է «աստվածաբնակ և անառիկ դղյակ Բջնի» ձևով։

Բջնիի արևելյան մասում՝ բլրի գագաթին, VIIդ. Կառուցվել է Ս.Սարգիս եկեղեցին։ Իր արտակարգ փոքր չափերի հետևանքով (Հայաստանի նույնատիպ եկեղեցիներից ամենափոքրն է) կոնստրուկցիաները խիստ պարզեցված են։

Սարահարթի վրա Պահլավունի իշխանները X-XIդդ. Հիմնել են մի բերդ, որը դարեր ի վեր Նիգ գավառի գլխավոր ամրությունն էր և վերահսկում էր Բջնիի մատույցները։ Բջնի բերդի տիրակալն էր Վասակ Պահլավունին, որի որդին՝ Գրիգոր Մագիստրոսը, 1031թ.-ին կառուցել է Ս.Աստվածածին եկեղեցին (այժմ էլ կանգուն)։

Եկեղեցու յուրօրինակ տարրերից են ներսում 5մ բարձրության վրա պատերի երկայնքով ձգված քարե դարակները: Ենթադրվում է, որ այստեղ են դրվել Բջնիի վանքում գրված բազմաթիվ ձեռագրերը:
Եկեղեցուն հարավից կցված է թաղածածկ մատուռ (XIIIդ.), որի արևմտյան պատի խորշում կանգնեցված է մեծ խաչքար:
Բջնիում ստեղծագործել են նշանավոր քարգործ վարպետներ, այդ մասին վկայում է արևելյան պատի դիմաց կանգնեցված բարձրարվեստ խաչքարերը:
Բջնիի ուշագրավ վայրերից մեկը Ծակքար կոչվող ժայռն է, որն իսկապես բնության հրաշքներից է: Այն վիթխարի բնական կամար է, որը բացված է ձորի երկայնքով ձգված ժայռերի մեջ: